

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻՆ ՖՐԱՆՍՍՅՈՒՄ

Հոգևորականութեան միջամտութիւնը դպրոցական գործում եւ ընտրական պայքարը քաղաքական իշխանութեան եւ Ֆրանսիայի հոգևորականութեան մէջ:

— Ֆրանսիական եպիսկոպոսները միահամուռ շրջաբերական են հրատարակել աշխարհիկ դպրոցների մասին, որքան և եպիսկոպոսներից ոմանք մեղմօրէն են բացատրում այնու ամենայնիւ շրջաբերականը հանդիսանում է աշխարհիկ դպրոցի և նրան հովանաւորող կառավարութեան դէմ պատերազմի ազդարարութիւն. որովհետև իրանք-եպիսկոպոսները իրանց թեմական լրագրերում հրահանգում են թէ կեանքի մէջ ինչպէս պէտք է իրագործուեն շրջաբերականի պահանջները: Հոգևորականութեան վերայ պարտք է դրուած հետևել թէ դպրոցներում ինչ դասագրքեր են գործադրում, դասաւանդութիւնը ինչպէս է առաջ տարւում, ձեռք բերել աշակերտների շարագրութեան և թելագրութեան տեսրակները: Մտքերը հանգստացնելու համար եպիսկոպոսները բացատրում են, որ այս գործողութեան մէջ հաւատաքննութիւն չը կայ, այս միայն հովուական մի հոգացողութիւն է մանուկների հոգևոր բարիքի համար: Եթէ երևի, որ աշակերտներին դպրոցում տալիս են եպիսկոպոսի շրջաբերականով արգելուած դասագրքեր, կամ բերանացի դասաւանդութեան ժամանակ անարգում է կաթոլիկական հաւատալիքը, քահանան պարտաւոր է ամեն կերպ աշխատել վերջ տալ դրան, պէտք է համոզի ուսուցչին և ծնողներին, որ կամ հեռացնեն վնասակար գրքերը կամ երեխաներին հանեն դպրոցից, դիմել շրջանի քաղաքապետի, պատգամաւորի և սենատորի օգնութեանը, հիմնել ընտանիքի հայրերի ժողովներ: Եթէ այս բոլոր միջոցները—անգոր մնան, քահանան պարտական է կատարել իւր պարտքը խոստովանութեան ժամանակ յամառ ուսուցիչներին և ծնողներին թողութիւն պէտք է չը տայ: Մի

քանի եպիսկոպոսներ այս դէպքում մինչև անգամ երեխաներին էլ չեն խնայում և խորհուրդ են տալիս հանդիսապէս հրատարակել թէ նրանք, երեխաները, զրկուած են առաջին հաղորդութիւնից, սմանք այդ թոյլ են տալիս միայն բացառիկ դէպքերում: Եպիսկոպոսական այդ օրինակ հրահանգութիւնը տեղ տեղ ցոյց է տուել իւր ներգործութիւնը և դասաւանդութեան մէջ շիտթութիւն է առաջ բերել, որով հարկադրուել է կառավարութիւնը համապատասխան միջոցներ ձեռք առնել:

Լուսաւորութեան նախարար Դումբրգը յայտնել է ուսուցիչներին որ նրանք դասագրքերը չը պէտք է փոխեն հոգևորականների կամ ծնողական ժողովների ցանկութեամբ, որովհետև այս մասին հրահանգութիւն նրանք պէտք է ստանան միայն իրանց իշխանութիւնից, և դպրոցներին չը վերաբերող իշխանութեան ամեն մի միջամտութիւն անհանդուրժելի ստնձգութիւն է ուսումնարանական անկախութեան և աշակերտների անձնապատուութեան դէմ, նրանք պարտաւոր են բացորձակ մերժել: Իսկ այն աշակերտները, որոնք կը հրաժարուեն այս կամ այն դասագիրքը ընդունելուց կամ կը հրաժարուեն այս կամ այն առարկայից, պէտք է պատժուեն, դպրոցական կանոններին համեմատ: Եպիսկոպոսների շրջաբերականի առիթով որոշակի խօսել է և մինստր նախագահ Բրիանը, Պերիգետում արտասանած քաղաքական ճառի մէջ, ոչ մի խօսք չասելով եպիսկոպոսների շրջաբերականի մասին այլ ընդհակառակն յայտնել է, որ անհրաժեշտ է եկեղեցու վերաբերութեամբ հաշտ քաղաքականութիւն: Կրթութեան Լիգայի շինութեան բացման հանդիսին նա յայտնեց, որ կառավարութիւնը թոյլ չի տայ ստնձգութիւն աշխարհիկ դպրոցի վերաբերութեամբ, դպրոցի՝ որ հասարակապետական հիմնական հաստատութիւններից մէկն է, և ամեն միջոց գործ կը դնի նրա եռանդուն և օրինական պաշտպանութեան համար: Բրիանի կարծիքով աւելի իրական կը լինէր եթէ դպրոցը պաշտպանէին իրանք ուսուցիչներն ուսուցչուհիները, ընդհանրապէս մասնաւոր ձեռնէրէցութիւնը նախ-

ընտրելով: Թշնամիները՝ դպրոցի վերայ յարձակմանը, նախագահ մինիստրը մեծ նշանակութիւն չէ տալիս այս անգամ, յատկապէս նրա համար, որ այդ տեղի է ունենում ուրիշ իշխանութիւնից, այսինքն Պապից, որին հասարակական կարծիքը համարում է գլխաւոր յանցաւորը եպիսկոպոսների սկսած պատերազմի:

Փրանսիան, ասաց Բրիանը, սիրում է անկախութիւն, չի թոյլ տայ, որ արտաքին կարգադրութիւնները կաշկանդէին նրա գործողութեան եղանակը, կաթոլիկներէն նոյն իսկ նրանք, որոնք իրանց տխուր ժամերին կրօնքի մէջ մխիթարութիւն են տեսնում, և ոչ ընտրական պայքարի դէնք, պէտք է թոյլ չը տան որ կրօնը կոպիտ ճնշումն գործէր իրանց երկրում, դրդէր իրանց ընդդէմ սահմանուած կարգերի, որ իրանք են երկրին ազատօրէն շնորհել: Փրանսական միտքը միշտ էլ կը վրդովուի նման միջամտութեան դէմ: Ի նկատի ունելով Բրիանի խօսքերը իրանք ուսուցիչներն ու ուսուցչուհիները կամենում են պաշտպանել դպրոցը, և որոշել են եպիսկոպոսների դէմ գործ սկսել դատարաններում: Ուսուցիչների և ուսուցչուհիների ընկերութիւնը որ մինչև 200 հազար անդամ ունի, բաղաբացիական դատ է սկսել շրջաբերականը ստորագրող բոլոր եպիսկոպոսների դէմ ընդհանրապէս և իւրաքանչիւրի դէմ առանձին, հիմնուելով շրջաբերականի բովանդակութեան վերայ:

Ուսուցչական դասակարգի դէմ մեղադրանքներն են օրինակ, որ ուսուցիչները աշակերտներին բարոյապէս փչացնում են, որ նրանք բարի վարքի օրինակ չեն, բարի վարքի և հասարակական բարիքի հակառակ բաներ են սովորեցնում, ընտանիքի մէջ ճարակող արատների գլխաւոր պատճառներից մէկն են հանդիսանում, դասագրքերի միջոցով տարածում են սոթի դատապարտելի հօգին, ստեղծում են վտանգ երեխաների հաւատի և առաքինութեան համար, ոտնահար են անում դպրոցների չէզոքութեան օրէնքը և անարգում են աշակերտների կրօնական զգացումները:

Բողոքաւոր ուսուցիչները յայտնում են, որ մէջ բերուած մեղադրութիւնները ուսուցչական դասակարգին նիւթական և բարոյական վնաս են հասցնում, նրանց վարկարեկ անելով աշակերտների և ծնողների առաջ և խնդրում են դատարանին իրանց վնասի փոխարէն իւրաքանչիւր եպիսկոպոսի 5000 ֆրանկ տուգանքի ենթարկել: Բէյմսի արքեպիսկոպոս կարգինալ Լիւսօնը առաջինն ստացաւ այսպիսի պահանջ, միւս եպիսկոպոսները յայտնել են որ համաձայն են նրա հետ:

Արմատականները այս դասը եպիսկոպոսների համար քիչ են համարում, և եռանդով աշխատում են, որ փակուեն մասնաւոր դպրոցներն և միմիայն կառավարութիւնը ունենայ տարրական դպրոցներ, որպէս աւելի զգալի պատասխան եպիսկոպոսների ոտնձգութեան դէմ: Առաջարկում են, որ մասնաւոր դպրոցների ուսուցիչները լինեն համալսարանական կրթութեամբ, ինչպէս են պետական դպրոցներինը:

— Ֆրանսական կաթոլիկների մէջ, ինկատի ունենալով պալատի պատգամաւորների ընարութիւնը, միտք է յղացել ընտրական մի ընդհանուր համաձայնութիւն կազմել, որի մէջ մտնէին ոչ միայն անկեղծ կաթոլիկները, այլ և ազատամիտները, և ընդհանրապէս ամեն կուսակցութեան շիտակ մարդիկ քաղաքացիական և կրօնական ազատութիւնը պաշտպանելու համար: Գործի գլուխ են անցել Նանսի և Տուլուզի եպիսկոպոսները: Այս միութեան յենակէտն է Պիոս X-ի խօսքը, թէ նա յարգում է ֆրանսական արքայականների, բօնապարտեանների և հանրապետականների կարծիքը, միայն թէ նրանք միանային կրօնքը, հասարակութիւնը և երկիրը պաշտպանելու համար: Տուլուզի եպիսկոպոսը այս նպատակով հրաւիրել է բոլոր կաթոլիկներին, ինչ կուսակցութեան էլ պատկառնէին, որ ընտրութեան ժամանակ համաձայն գործեն: Եւ նէին, որ ընտրութեան ժամանակ համաձայն գործեն: Եւ այս բանի համար էլ կազմել է Վերին-Դուրօնի «կաթոլիկների գաշնակցութիւն»-ը: Դաշնակցութեան ծրագիրն է, վերահաստատել կրօնական խաղաղութիւն Ֆրանսիայում:

Ս. Գահի (պապի) համաձայնութեամբ, վերահաստատելով ուսման կատարեալ ազատութիւնը, Վերջի վերջոյ ֆրանսական կաթողիկոսերի միութեան ծրագրի քննադատութիւնը միայն պատճառ դարձաւ նրանց առաւել ևս պառակտմանը:

«Մշակ»ի մէջ կարդում ենք.

Պիոս X պապը վճռեց նորից հանդէս գալ մի ճառով այն կռուի առիթով, որ տեղի ունի ներկայումս Ֆրանսիայում հոգևորականութեան և կառավարութեան միջև: Նախընթաց ճառերի նման, պապի ներկայ ճառն ևս աչքի է ընկնում իր խիստ լեզուով «հալածողներին» հասցէին և հրաւիրում է ներկայ հոգևորականութեանը չը թուլանալ կռուի մէջ:

«Հալածանք» Խօսքը, — ասում է, նա — չէ կարող ոչ ոքի չափազանց երևալ, որովհետև այլապէս ինչպէս բնորոշել այն մարդկանց գործերը, որոնք կամայականօրէն պատուեցին եկեղեցու հետ կապած հանդիսաւոր դաշնագիրը, որոնք յափշտակեցին նրա սրբազան ստացուածքը, որոնք ճնշում են առաքինութեան և մաքրութեան ամեն զգացմունք և աքսորում են հայրենիքից կրօնական կարգերին պատկանող արժանաւորագոյն քաղաքացիներին, որոնք բամբասօրէն հանրապետական թշնամի են հրատարակում հոգևորականներին նրա համար միայն, որ նրանք պահանջում են կրօնի և եկեղեցու համար այն ազատութիւնը և յարգանքը, որոնց վրայ նրանք անվիճելի իրաւունք ունենալ:

Ապա պապը անցնում է օրուայ չարիք կազմող հարցերին, այն է՝ աշխարհական դպրոցի դէմ կռիւ մղելու և կաթողիկոսերի միութեան մասին:

«Ճպիսկոպոսները, որոնք վկայ են այն ահագին չարիքի, որ պատճառում է աշխարհական դպրոցը, հարկադրելով մատաղ սերնդին պիղծ և անբարոյական գրքեր կարդալ, վշտի ազդակներ բարձրացրին՝ ընտանիքների հայրերի ուշադրութիւնը գրաւելու համար նրանց մանուկներին սպառնացող վտանգի վրայ: Եւ ահա այն ժա-

մանակ, երբ իւրաքանչիւր ֆրանսիացի քաղաքացի իրաւունք ունի ստիպելու, որ լսեն իր խօսքերը, եպիսկոպոսների յայտարարած ճշմարտութիւնը ատելութեան առարկայ դարձաւ իշխող անձերի համար, և ահա այժմ նրանք կամենում են խլել այդ եպիսկոպոսներից նրանց իրաւունքը՝ ուսուցանել իրանց հօտին: Պիոս X-ը հրաւիրում է կաթօլիկներին սերտ կերպով միանալ իրանց հոգևոր առաջնորդ եպիսկոպոսների շուրջը, յորդորելով կռիւ մղել եկեղեցու ազատութեան համար, և յոյս է յայտնում, որ «կը գայ մի օր, որ կը տայ նրանց յաղթութիւն թշնամիների վրայ և կը վարձատրէ այժմ թափուող արցունքները»:

Պապի ճառին Ֆրանսիայում բնականաբար խիստ պատասխաններ տուին: Զգոյշ և չափաւոր «Temps» լրագիրը գրում է, որ «այդպիսի ճառերը միայն այն կարծիքն են հաստատում, թէ Հոօմը չէ ցանկանում հանգիստ թողնել Ֆրանսիային, մինչև որ կառավարութիւնը հանգիստաւոր մեղայական չը բերի նրան: Աւելորդ անգամ ստիպուած ենք մատնացոյց անել այն կորստաբեր ազգեցութիւնների վրայ, որոնք Պիոս X-ի քահանայապետութեան օրից մղում են Հոօմը դէպի ծայրայեղ քայլերը այն երևակայական յուսով, որ եկեղեցին վերջ ի վերջոյ օգուտ կունենայ մի այդպիսի դորձելակերպից»:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Բերլինում այժմ տեղի են ունենում Պրուսիայի ինն հին նահանգների աւետարանական եկեղեցու գլխաւոր (հերթական 6-րդ) Սինօդի նիստերը, որի քննութեանը պրուսական բարձր խորհրդից առաջարկուած է օրինագիծ պատօրնների անուղիղ վարդապետութեան մէջ մեղադրութեան մասին, որը Սինօդի զբաղմունքների մէջ ամենակարևոր կէտն է լինելու: Ազատամիտ պատօրնների մասին «գործերը» որ վերջին տարիներս այնքան յաճախ ծագում են կոնսիստորիաներում և եկեղեցական բարձր